6092

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Թ.Հ.Կ.Մ.

ԱԶԳԻՍ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏ
Տ. Տ. ՄԱՏԹԷՈՍ Բ.
ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻՆ
ՈՂՋՈՒՆԱԿԱՆ ԱԿՆԱԾՈՒԹԵԱՄԲ
ՆՈՒԻՐՈՒՄ Է Թ.Հ.Կ.Մ.
ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ՄԵԿՑԵԱՆ

1689
63
Գ-32

120
2349
420
0542
0 Ch 8

63
9-32

ՀՐԱՏ. ԲԱԳՈՒԱՅ ՀԱՅ ԿՈՒԼՏ. ՄԻՈՒԹԵԱՆ

Ս. ՋԱԻԱՐԵԱՆ

ԿԱՆՈՆԱԳԻՐ

ԳԻՒՂԱԿԱՆ ԿԱՄ ԸՆԿԵՐԱԿԱՆ

ՇՏԵՄԱՐԱՆ — ԳԱՆՁԱՐԱՆԻ

1689

Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳ
1907

2 ԿՈՊ.

«Պուշկինեան Արագատիպ»
Լեշտուկով փողոց տուն 4

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱՄԱՐ
105768-ԱՀ
648-2009

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Հասարակական շտեմարանների-գանձարանների կազմակերպելը համարելու է մեր երկրի ամենահասունացած և ամենակարեւոր խնդիրներից մէկը։

Բնութեան ամեն մի պատահար՝ աշխատաւոր ձեռքի մահը, կարկուտը, մուկը, ժանտախտը և այլ հազար ու մի քամբախտութիւն ամեն օր սպառնում են քայքայել գիւղացու տնտեսութիւնը։ Առանց հարեւանների օգնութեան ոչ մի հողագործ չի կարող վստահ լինել, որ միմիայն իր ույժերով կ՚կարողանայ եօլա գնալ, առանց փոխառուի վրտանգաւոր օգնութեան դիմելու։ Վերջապէս, օրէցօր բարդացող ու լայնացող հասարակական կարիքնե-

ը հարկադրում են խորհել այն ուղիների մասին, որոնք կարող են նպաստել հաւաքական ձեռնարկների զարգացման ...

Եթէ մինչև օրս այդ ուղղութեամբ արւած է քիչ բան, դրա պատճառներից մէկն էլ նա է, որ նախաձեռնութեան ընդունակ, գիւղում ապրող անհատները չեն ունեցած իրենց ձեռքի տակ համապատասխան ծրագիր։ Ներկայ կանոնադիրը այդ տեսակէտից կարող է ներկայացնել որոշ օգտակարութիւն։ Նրան հիմք են ծառայել թէ նոյն նպատակների համար զանազան վայրերում գոյութիւն ունեցող կանոնները, թէ մի քանի հայկական գիւղերի փորձերը։

Ներքևում զետեղւած կանոնագրի մանրամասութիւնները քննել են Ղարաբաղի մի քանի շրջանային ժողովներում, որոնք մտցրել են որոշ փոփոխութիւններ և տւել են իրենց

հաւանութիւնը ծրագրի հիմնական կէտերին։

Վերջապէս, նրա տարածելը գիւղական լայն խաւերում կարող է նպաստել, որպէս զի ներկայումս սովեալ վայրերում բաժանւող հացը չ'անցնի առանց հետքի, այլ գործադրւի որոշ ուղղութեամբ, գիւղական շտեմարանների անունից։

Հեղինակը յոյս ունի կարծելու, որ թէև տեղական պահանջների համեմատ Շտեմարան-Գանձարանի ներկայ կանոնադիրը կ'ենթարկւի փոփոխութիւնների, բայց ընդհանրապէս կը հանդիսանայ մի օգտակար ուղեցոյց։

Ս. Զաւարեան.

ԿԱՆՈՆԱԳԻՐ

ԳԻՒՂԱԿԱՆ ԿԱՄ ԸՆԿԵՐԱԿԱՆ ՇՏԵՄԱՐԱՆ — ԳԱՆՁԱՐԱՆԻ

I.

ՆՊԱՏԱԿ

Գիւղական շտեմարան — գանձանպատակն է՝

Ա.) Ունենալ գիւղում հացահատիկների պաշար որոշ քանակութեամբ՝ սովի և թանգութեան առաջն առնելու համար։

Բ) Ապահովել սերմացուով գարնանը նրանց, որոնք անկարող են սեփական միջոցներով անհրաժեշտ քանակութեամբ ցանքս անել։

Գ) Շունչ քաշելու միջոց տալ և

ոտքի կանգնեցնել գիւղի այն չքաւորներին ու բնական պատահարներից տուժածներին, որոնք — չնայած իրենց բոլոր ջանքերին — անկարող են առանց հարևանների օժանդակութեան ապահովել իրենց տնտեսութիւնը։

Դ) Զափաւոր տոկոսներով օգնութեան հասնել չքաւորներին ու կարիք ունեցողներին և այդպիսով կռիւ մղել վաշխառուների կատարած աւերումների դէմ։

Ե) Նպաստել գիւղի բարեկեցութեան ու տնտեսական յառաջադիմութեան, զարգացնելով և իրականացնելով այնպիսի ձեռնարկներ, որոնք ունին ընդհանուր տնտեսական նշանակութիւն և որոնց իրագործելը վեր է անհատների ուժերից և պահանջում է գիւղացիների ձեռքձեռքի տուած հաւաքական գործակցութիւն։

Վերջի կարգի ձեռնարկների շարքումն են համարելու աղբիւրների,

առուների, ջրամբարների բանալը, ճանապարհների և կամուրջների շինելը, համայնական կամ ընկերական ջրաղացների, բաղնիքների, ձիթհանների, փոների, խանութների, դեղատների հաստատելը, համայնքի համար հող ու արժէքաւոր մեքենաներ գնելը, ընտիր տեսակի ցուլեր, օրինակելի պարտէզներ պահելը և այլն և այլն։

II.

ՄԻՋՈՑՆԵՐ

Վերոյիշեալ նպատակին հասնելու համար շտեմարանին մասնակցողների բոլոր անդամները աշխատում են որպէսզի շտեմարանը տարէցտարի մեծացնէ իւր միջոցները, որ կազմւում են հետևեալ աղբիւրներից. —

Ա.) Գիւղի բոլոր անդամները (թէ գրսում աշխատողները, թէ գիւղում ապրողները) կամ նրանք, որոնք հա-

մակրում են շտեմարանի մաքին, իրենց տարեկան հասոյթից ու եկամուտից *) շտեմարանին յատկացնում են որոշ մաս՝ հարիւրին մէկ, երկու կամ աւելի։

Բ) Ջանազան անձնաւորութիւնների ու հաստատութիւնների նուէրներից, ընտանեկան ուրախութիւնների և այլ պարագաներում կատարած յատուկ հանգանակութիւններից։

Գ) Շտեմարանի անունով համայնական կամ ընկերական հաւաքական ջանքերով կատարած ցանքսերից և այլ տեսակի ձեռնարկութիւններից։

*) Հասոյթ համարւում է ա՛չ միայն հողագործութեան, այգեգործութեան բերքերը, վաճառած անասունների գինը, այլ և տարւայ ընթացքում աւելացած անասունների թիւն ու արժէքը, արհեստաւորների ու վաճառականների վաստակած դրամը, % %-ով տուած ստակի եկամուտը և այլն։

Դ) Այն եկամուտներից և % %-ից, որոնք ստանալու է շտեմարանը իւր տուած փոխառութիւնների համար, ինչպէս և շտեմարանի միջոցներով ստեղծած համայնական-ընկերական ձեռնարկներից։

III.

ՇՏԵՄԱՐԱՆԻՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ՆԵՐՔԻՆ ԿԱՆՈՆՆԵՐ

Ա.) Հացահատիկները և այլ կենսական մթերքները, որոնք կարող են ամբարում պահել առանց ուշադրաւ հսկողութեան ու ծախքերի, յանձնւում են շտեմարանին մթերքի ձևով կալի կամ ամբարելու ժամանակ։ Մնացած տեսակի հասոյթները կարող են յանձնել շտեմարանին մթերքների վաճառման ժամանակ թէ դրամով և թէ մթերքով (իրենց արժէքի համեմատ), որը շտեմարանի

հոդաբարձութեան կողմից վաճառւում և վերածւում է դրամի։

Դրամով եկամուտ ստացողները (թէ դրսում և թէ տեղում) իրենց մասը վճարում են միանւագ կամ մաս-մաս, սակայն հաշւետւութեան տարւայ դեկտեմբերի 15-ից ոչ ուշ։

Բ) Շտեմարանի կողմից նպաստները տրւում են առաւելապէս հողից, անասուններից զուրկ և այլ կարգի չքաւորներին. յետոյ միայն նրանց, որոնք այդ տարւայ ընթացքում կրել են շօշափելի հարւածներ (կորցնելով սան աշխատաւոր ձեռքերը, տուժելով ժանտախտից, կարկտից և այլն)։

Գ) Նպաստները (թէ մթերքով և թէ դրամով) տրւում են վերադարձնելու պայմանով։ Մթերքով օժանդակելու դէպքում պարտատիրոջ վերայ նշանակւում է տրւած մթերքի արժէքը այն չափով, որքան մթերքը գնահատւում է տրւած ժամանակ գիւղի կամ մօտակայ քա-

ղաքի շուկայում։ Մթերքով վերցնողը հետեւեալ կալի ժամանակ պարտաւոր է վերադարձնել իր պարտքը նոյնպէս մթերքով, այն քանակութեամբ, որպէսզի վերադարձուի իր պարտքի ամբողջ գումարը տոկոսի հետ միասին։

Դ) Նպաստները տրւում են ոչ աւելի քան մի տարի ժամանակամիջոցով, հաշւելով տարին հարիւրից 10, իսկ ամիսը հարիւրին 1 վրայիր։

Ե) Գիւղում ապրող աշխատող ձեռքերից զուրկ և ծայրայեղ չքաւորութեան մէջ ընկած ընտանիքներին նպաստ կարելի է տալ և առանց վերադարձնելու պայմանի, կամ առանց %-ի, սակայն առաջին երեք տարիների ընթացքում նպաստը չի կարող լինել շտեմարանի տարւայ ընդհանուր մուտքի $^1/_{10}$ (10%)-ից աւել։

Զ) Շտեմարանի բացւելուց առաջի մի քանի տարիները, մինչև որ

շտեմարանը հաստատուն արմատ կինի ծգած, ի կատար է ածելու գլխաւորապէս նպատակի Ա., Բ, Գ, Դ կէտերը, ծեռնպահ մնալով «Ե» կէտում յիշուած ծեռնարկների նկատմամբ։ Ընկերական ու համայնական ձեռնարկներին աւելի նպատակայարմար է դիմել այն ժամանակ, երբ շտեմարանի գործը կը լինի ապահովուած, այսինքն երբ նրա պաշարն ու դրամագլուխը կարող կլինին ապահովել ազգաբնակութիւնը 3—4 ամիս ժամանակամիջոցով (կամ ազգաբնակութեան $^1/_4$ — $^1/_3$ անապահով մասը մի տարով), հաշուելով ամեն մի անձի ամսական ապրուստի նւազագոյն պաշարը մի փութ ցորէն, կամ մի բուբլի դրամ։

IV.

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ, ՀԱՇԻՎԵՏՒՈՒԹԻՒՆ, ԿՕՆՏՐՕԼ

Ա.) Շտեմարանի գործերին վերաբերեալ պատասխանատուն համարուում է շտեմարանին մասնակցող գիւղի կամ մի քանի գիւղերի կողմից ընտրուած հոգաբարձութիւնը։ Վերջինս ընտրուում է գիւղում ապրող բարեխիղճ, չքաւորների ու հասարակութեան բարեկեցութեան մասին հոգ տանող անձնաւորութիւններից, թիւով 3 — 5 և աւելի (նայած գիւղի մեծութեան)։ Ընտրութիւնները կատարուում են կիրակի օր մօտ մի ամիս տարւայ շրջանառութիւնից և հաշուեւութիւնից առաջ։ Ընտրութիւններին մասնակցում են բոլոր 21 տարին լրացրած երկու սեռի անձերը, որոնք վճարում են շտեմարանի համար որոշուած տուրքը։

Ընտրութիւնները կատարելու են գաղտնի քւէարկութեամբ և ընտրուած հոգաբարձուները հասարակութեան առաջ պատշաճ ձևով երդւում և պատուոյ խօսք են տալիս, որ կանդնած կը լինեն իրենց կոչման բաձրութեան վրայ, ամենայն բարեխղճութեամբ ու անկողմնապահութեամբ կը վերաբերուեն դէպի իրենց ստանձնած պարտականութիւնները:

Բ). Հոգաբարձուները հոգ են տանում որպէսզի շտեմարանի մթերքները պահւին յատուկ կառուցած կամ վարձած ամբարի մէջ, որի դրոները բացելու են սովորաբար կիրակի օրերը, շտեմարանի հոգաբարձութեան առնւազն երկուսի ներկայութեամբ:

Շտեմարանի դրամագլուխը պահւում է մօտակայ բանկում կամ պետական խնայողական արկղում զիւղի անունով, ի զիմաց զիւղի կողմից գաղտնի քւէարկութեամբ ընտրուած յատուկ անձի, որը նոյն տեսակի մէջ ցուցակագրելու է միայն շտեմարանին վերաբերեալ գումարները:

Գ) Ամէն մի հոգաբարձութիւնունի շտեմարանի համար մի ժապաւինեալ կնքւած մատեան, ուր օրակարգի ձևով մտցւում են մէկիկ-մէկիկ բոլոր մուտքերն ու բոլոր գուրս թողւող նպաստները և մի այլը որի մէջ ամեն մի նպաստ ստացողի յատկացւած է յատուկ երեսներ, ուր օրակարգի ձևով մտցւում են թէ տրւող նպաստները, թէ վերադարձրած պարտքերը (տոկոսների հետ միասին): Թէ նպաստներ տալիս թէ պարտքերն ստանալիս շահագրգռւած կողմին տալիս են համապատասխան ստացական, որի պատճէնը մնում է քարտուղարի մօտ:

Հաշիւները պահում է հոգաբարձութեան քարտուղարը, իսկ գրքերը գտնւում են այնպիսի մի հասարակական տեղ, որպէսզի ամեն մէկը

ՀԱՅԱՍՏԱՆ

հնարաւորութիւն ունենայ նայելու և ստուգելու այդ հաշիւները։

Դ) Հոդաբարձութիւնը իր նիստերը ունենում է կիրակի օրերը (բացառիկ դէպքերում, հարկաւ և այլ օրէր). նպաստ տալու հարցերը ինչպէս և այլ կարգի իրենց վերաբերեալ հարցերը լուծում է առնւազն ձայների $^2/_3$-ով։ Խոշոր տնտեսական նշանակութիւն ունեցող հարցեր որոշելիս հոդաբարձութիւնը հրաւիրում է իր նիստերին և հասարակութեան այլ ծեռնհաս անձնաւորութիւնների, գումարում է նոյն իսկ ընդհանուր համայնական ժողով։

Ե) Ամեն ամսի վերջին հոդաբարձութիւնը տալիս է համայնական ժողովին ամփոփ հաշիւ իւր արածների մասին, հասարակական շէնքի պատի վերայ կպցնում է նպաստ ստացողների ցանկը։ Տարեայ վերջը դեկտեմբերի 15-31, հոդաբարձութիւնը տալիս է մանրամասն հաշ-

ուետուութիւն իր գործունէութեան մասին և նոր հոդաբարձութեանն է յանձնում շտեմարանի պաշարը, գումարները և բոլոր ձեռնարկները, ստորագրելով նախապէս թէ ընդհանուր հաշուեկշիռը (մեծ գրքի մէջ ամփոփուած կամ առանձին թղթի վրայ), թէ նպաստ ստացողների մատեանը։

Շրջանային խորհուրդը, ամփոփելով, լուսաբանելով և քննադատելով շտեմարանների գործունէութիւնը տալիս է դա հրատարակութեան մամուլի միջոցով։

Զ) Ամեն մի շրջանի շտեմարան ունեցող գիւղերի հոդաբարձուները տարին մի կամ մի քանի անդամ ժողովում են խորհրդակցելու այն հարցերի մասին, որոնք նշանակութիւն ունին ամբողջ շրջանի, կամ մի քանի հարևան գիւղերի համար, ինչպէս և ընդհանուր ուժերով աւելի լայն տնտեսական ձեռնարկներ իրականացնելու։ Այդ շրջանային ընդ-

հանուր ժողովներից մէկում (սովորաբար նոյեմբերին, գաղտնի քուէարկութեամբ ընտրում է շրջանի համար մի տնտեսական կամ շտեմարային խորհուրդ (5-10 կամ աւելի անձնաւորութիւններից): Խորհուրդը թէ պահում է կապ գիւղական հոգաբարձութիւնների մէջ, թէ իրականացնում է շրջանի ընդհանուր ժողովի որոշումները և թէ ստուգում է (կօնտրոլի է ենթարկում) շտեմարանների գործունէութիւնը՝ նայում է գրքերը, ստուգում է ամբարի մթերքները, բանկում կամ խնայողական տրկղում դտնուած շտեմարանական գումարները և այլն:

Վերստուգում (կօնտրոլ) հոգաբարձութեան վերայ կարող է ունենալ և գիւղի հասարակութիւնը ամեն մի րոպէ, եթէ կօնտրոլի պահանջ է ներկայացնում շտեմարանի անդամների $^1/_{10}$-դը:

V.

ԲԱՐԵՓՈԽՈՒԹԻՒՆ, ԿԱԶՄԱԼՈՒ ԾՈՒՄ (ԼԻԿՎԻԴԱՑԻԱ)

Ա) Շրջանային հոգաբարձուների ընդհանուր ժողովի $^3/_4$-դի որոշմամբ այս կանոնադրութիւնը, կամ նրա որոշ կէտերը կարող են ենթարկուել լրացման, կրճատման կամ այլ ձևի փոփոխութեան:

Բ) Շտեմարանի այս կամ այն անդամը, վճարելով կանխապէս շտեմարանին իր բոլոր պարտքերը, կարող է հրաժարուել անդամակցութիւնից: Հրաժարուելու պարագայում նա զրկուում է այն դրամագլխից, որը ժամանակի ընթացքում մտցրել է շտեմարանի մէջ:

Գ) Երբ շտեմարանին մասնակցողների $^4/_5$-դը ցանկութիւն է յայտնում լուծել շտեմարանը, վերջինիս պատկանող ամբողջ գոյքն ու սեփականութիւնը (դրամով, մթեր-

քով) յատկացուում է գիւղի համար հանրօգուտ նշանակութիւն ունեցող մի ձեռնարկի, կամ յանձնւում է գիւղում ապրող այն ընտանիքներին, որոնք չունին հող, անասուն, աշխատող ձեռք, կամ ունին դա անբաւարար չափով։



6092 200

2013

<< Ազգային գրադարան
NL0127233